

**ԿԱՊԻ ԶՆՅՈՒՆԱԿԱՆ, ԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

Մհեր Քումունց

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

<https://orcid.org/0000-0001-5496-3783>

mherkumunts@gmail.com

Բաղդասարյան Մանանա

Ուսանող

Հայաստան, Գորիսի պետական համալսարան

BaxD.asaryan.manana15@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-249

Սույն հոդվածում ուսումնասիրել ենք Գորիսի բարբառի կապ խոսքի մասը: Աշխատանքն իրականացրել ենք համեմատական և վերլուծական մեթոդով՝ բարբառի կապերը համեմատելով գրական հայերենի և բարբառային այլ միավորների համապատասխանականերին: Ներկայացրել ենք կապերն ըստ հոլովառության՝ բերելով բարբառային կենդանի օրինակներ Գորիսի բարբառից: Բարբառները կենդանի և անհսկելի վիճակով տարբերակներ են, իսկ կապերը նրանցում կարևոր գործառույթ ունեն: Գորիսի բարբառի կապերը թերի են ուսումնասիրված, և պահանջ կա քերականական այդ համակարգի քննության: Չկան ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են Գորիսի բարբառի կապերի ծագումը, կազմությունը և պատմական փոփոխությունը: Բարբառի պատմական զարգացման ընթացքում փոփոխվել են նաև այս խոսքի մասերը: Դրանցից շատերը քիչ գործածության պատճառով ժամանակի ընթացքում դուրս են մնացել բարբառի գործուն շերտից և այժմ էլ կիրառելի չեն: Սակայն շատ կապեր առնմանության միջոցով փոփոխությունների են ենթարկվել, տեղի են ունեցել հնչյունական

շեղումներ և ընդհանուր արմատական փոփոխություններ: Հողվածում ներկայացված են նաև կապերի արտասանական տարբեր ձևեր՝ ըստ Գորիսի շրջանի բարբառային միավորների: Փորձել ենք պարզել մի շարք կապերի առաջացումը, գտնել դրանց ծագման ակունքները, ըստ այդմ առանձնացրել ենք փոխառյալ կապեր, ինչպես և՝ բնիկ հայերեն և գրաբարյան ակունք ունեցող կապերը:

Բանալի բառեր. բարբառ, կապ, համեմատական և վերլուծական մեթոդ, համեմատություն, փոխառություն:

Ներածություն

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Գորիսի բարբառի կապերը, համեմատել հայերենի այլ տարբերակների կապերի հետ, վերլուծել դրանց կազմությունը, ծագումը, պատմական փոփոխությունները: Կան բարբառներ, որ գրական և համաժողովրդական հայերենի համեմատությամբ առաջ են բերում յուրահատկություններ: Այդ բարբառների թվին է պատկանում Գորիսի տարածաշրջանի խոսակցական տարբերակը, որը հնչյունական, բառային և քերականական բազմապիսի առանձնահատկություններով տարբերվում է հայերենի մյուս բարբառներից և իրավացիորեն ընդգրկվում է Սյունիք-Արցախի բարբառախմբի կամ Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի մեջ որպես առանձին բարբառ: Բարբառիս՝ հայերենի մյուս տարբերակներից առանձնանալը և ինքնուրույն բարբառ լինելը նկատվում է նաև կապերի ձևային և իմաստային հարցերը քննելիս: Առհասարակ բարբառների կապերը քիչ են քննության ենթարկվում: Գորիսի բարբառի կապերին վերաբերող որևէ ուսումնասիրություն չկա (թերևս միակը Ա. Մարգարյանի “Գորիսի բարբառը” աշխատությունն է, որտեղ մասնակիորեն քննվում է Գորիսի բարբառի կապերը): Պատմությունը ցույց է տալիս, որ

բարբառների մեռնելու կամ ձուլվելու պատճառներից մեկը պատերազմն է, որ իր հետ բերում է մահ, բռնագաղթ, ուժացում և այլն: Ցավոք, Սյունիքը այսօր հայտնվել է աշխարհի շահերի բախման կետում, և մեզնից որևէ մեկը ապահովագրված չէ վաղվա հնարավոր սարսափելի իրադարձություններից: Նաև այս մտավախությամբ կարևորում ենք այս ուսումնասիրությունը և արդիական ենք համարում ոչ միայն հայերենի բարբառագիտական ատլասի կազմմանը նպաստելու, այլև հայրենի բարբառի արժևորման տեսանկյունից, բարբառ, որ հազարամյակներ շարունակ ապրում է իր յուրահատուկ դիմագծով, լեզվամտածողությամբ հայկական բնիկ միջավայրում:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտությունը կատարելիս առաջնորդվել ենք նման ուսումնասիրություններ կատարելու ավանդական մեթոդներով, ըստ այդմ՝ ուսումնասիրության մեթոդաբանության մեջ մասնավորապես ներառված է համեմատությունը և վերլուծությունը: Նախ՝ համեմատել ենք Գորիսի բարբառի կապ խոսքի մասերը գրական հայերենի և բարբառային այլ միավորների համապատասխան ձևերի հետ՝ փորձելով բացահայտել նրանց կազմության, կիրառման և գործառնությունների միջև տարբերություններն ու նմանությունները: Ապա՝ համեմատական մեթոդը հնարավորություն է տվել հայտնաբերել և վերլուծել կապերի տարբեր ձևերը՝ ըստ հոլովառության՝ համեմատելով դրանք այլ՝ մասնավորապես Մեղրու, Արցախի, Կապանի և Սիսիանի բարբառային տարբերակների հետ: Հետազոտության ընթացքում կարևոր է եղել նաև բնիկ, բարբառային և փոխառյալ կապերի վերլուծությունը, տարբերակման (հնչյունական, բառակազմական, իմաստային) հատկանիշների ընգծելը, որի հիման վրա էլ կիրառել ենք

փոփոխությունների վիճակագրական մեթոդ՝ պարզելու Գորիսի բարբառի՝ հարակից բարբառների նկատմամբ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները: Հետագա ուսումնասիրողների համար կարող են տեսանելի և հասկանալի լինել Գորիսի բարբառի և նրան հարակից տարածքների բարբառային միավորների կապերի պատմական և հնչյունական զարգացումները, ինչպես նաև նրանց տարածման ու կիրառման ներկա մակարդակները: Բացի այդ, վերլուծական մեթոդով փորձել ենք պարզել կապերի գործառական ընդհանրությունները հին հայերենի հետ՝ հասկանալու ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների աստիճանը: Հնչյունաբանական, իմաստային, կառուցվածքային և ծագումնաբանական հատկանիշները հաշվի առնելով՝ ուսումնասիրության մեջ առանձնացվել են բարբառային կապերը՝ հիմք ընդունելով բարբառային կենդանի խոսքի օրինակները: Հնչյունաբանական ուսումնասիրությունը կարևոր է եղել առանձին կապերի արտասանության և հնչյունական շեղումների բացահայտման համար:

Ուսումնասիրության նյութը

Ուսումնասիրության նյութը Գորիսի բարբառի կապ խոսքի մասն է, որ համեմատվել է գրական հայերենի և Հայաստանի հարավարևելյան շրջանների ու Արցախի մի քանի հարակից բարբառային միավորների համապատասխան կապերի հետ: Յուրաքանչյուր կապի համար կազմել ենք առանձին թերթիկ, որը լրացվել է հարցումներով: Այս առումով դժվարացել ենք ամբողջական նյութ վերցնել Սիսիանի տարածաշրջանից, որտեղ խոսվածքները մոտ են և՛ գրականին, և՛ միատարր չեն: Հիմնականում ուշադրությունը կենտրոնացվել է այն կապերի վրա, որոնք առկա են Գորիսի բարբառի կենդանի խոսքում՝ ընդգրկելով տարբեր խոսքային

օրինակներ, որոնք արտացոլում են բարբառի բնական վիճակը և փոփոխականությունը: Ուսումնասիրության նպատակով նյութը հավաքվել է տեղաբնիկ խոսողների բնավոր խոսքից, ինչպես նաև հայերեն բարբառագիտական գրականությունից (Աղայան Է. Բ. «Մեղրու բարբառը», Ա. Յ. Սարգսյան «Հաղորդի բառ ու բան», Ս. Ս. Մանուչարյան «Կապանի տարածաշրջանի խոսվածքները» և այլն): Աշխատանքում ներառվել են նաև արխիվային նյութեր, նախկինում գրառված տեքստեր և դաշտային հետազոտության արդյունքներ, որոնք պահվում են Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնում:

Քննարկում

Հայերենի տասը խոսքի մասերի համակարգում կապերը դասվում են չթեքվող խոսքի մասերի շարքում՝ հակադրվելով նյութական իմաստ ունեցող՝ թեքվող խոսքի մասերին, որոնք արտահայտում են օբյեկտիվ աշխարհին իր առարկաներով ու երևույթներով, դրանց հատկանիշներով ու գործողություններով, իսկ կապերն արտահայտում են քերականական իմաստ, այսինքն՝ դրվելով որևէ բառի վրա՝ դրանք կապում են ստորոգյալի հետ և այդ բառի հետ դառնում նախադասության մեկ անդամ, հիմնականում պարագաներ, նաև այլ անդամներ: Կապ տերմինի փոխարեն Գ. Ջահուկյանն օգտագործում է առդիր ձևը՝ նշելով, որ Մ. Աբեղյանի կողմից գործածության մեջ դրված կապ անվանումը տերմինային դժվարություններ է հարուցում, և մենք գերադասում ենք առդիր տերմինը:

¹ **Խ. Բաղիկյան**, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն*, Ե., հեղինակային հրատ., 2010, էջ 217:

² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայերենի առդիրների (կապերի) և շաղկապների իմաստային վերլուծությունը և դասակարգումը աշխ.*, էջ 59:

Հայերենի կապերի մի մասը գալիս է դեռևս մեր լեզվի պատմության վաղնջական շրջաններից, ծագամբ հնդեվրոպական է և իր զուգահեռներն ունի ազգակից մյուս լեզուներում: Անցնելով պատմական զարգացման երկար ուղի՝ այսպիսի բառերի մեջ զարգացել են վերացական նշանակություններ, և նրանք իրենց արտահայտած ընդհանուր իմաստներով մոտավորապես հավասարվում են հոլովական ձևերին: Այսպես են, օրինակ, գրաբարյան **Ի, Ց, ԱՌ, ԸՍՏ, ԸՆԴ, Զ** նախդիրները, որոնք բոլորն էլ, բացի **Զ**-ից, որի ծագումն անհայտ է, գալիս են հնդվրոպական հիմնալեզվից և այս կամ այն չափով կենդանի են ու գործուն արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում կամ բարբառներում:

Հայերենի կապերի մի մասն էլ թեկուզ չի հասել այսպիսի վերաջականության և ունի վառ կերպով դրսևորված բառային իմաստ, բայց այդ իմաստը սոսկ հարաբերության իմաստ է, իսկ նյութական իմաստը մեռած է կամ անզգայելի: Այսպիսի կապեր են՝ **առանց** (առ+անց), **բացի** (բաց «հեռու»+ի), **դեպի** (դեպ+ի), **համար** (առաջացած **համար** գոյականից), **հետ** (նախապես նշանակել է **ոտք**), **մասին** (**մասն** բառի գրաբարյան տրականը), **մինչև** (մինչ+ և) և այլն:

Բարբառիս կապերի ճնշող մեծամասնությունը **սեռական** հոլովով է խնդիր լրացումներ պահանջում՝

● **Առ** || **առի** (**ս, տ, ն**), օր.՝ Հռչր **առի** պա՛ն կա, թօղ մեզ նըշանց տա: «Հր. Աճառյանը և նրան հետևելով նաև ուրիշները **առիս**-ը բխեցնում են գրաբարյան **առ իս** (= ինձ մոտ) ձևից, իսկ Է. Աղայանը «Մեղրու բարբառը» գրքում հաստատում է. «այս կապն ստացվել է գրաբարյան **առ իս «ինձ մոտ»** կապակցությունից, որ նախ՝ բաղադրիչների մթագնումով միացել և դարձել՝ **առիս**, իբրև մեկ բառ, ապա՝ ս-ն գիտակցվելով որպես դիմորոշ հոդ, մյուս դեմքերի հետ էլ գործածվել է համապատասխան հոդերով, որով և ստացվել է առի

«մոտ» անկախ ձևը»³։ Եթե կապի խնդիր են անձնական դերանունները, վերջիններս կարող են չարտահայտվել, քանի որ դերանվանական **ս, դ, ն** հոդերը փոխարինում են կապի խնդիր հանդիսացող հիշյալ **դերանուններին**, այսինքն՝ կապը իր խնդրի հետ դրսևորվում է **առէս, առէտ, առէն** ձևերով (հմմտ.՝ առէս պէն չի կա «ինձ մոտ բան չկա» , և փոխանվանաբար՝ առէնըտ ինձ տօ «քեզ մոտ եղած բանը ինձ տուր») ⁴» :

● **Առաջ || առաչ || ըռաչին**, օր.՝ Տիրալ էմ աշկին **ըռաչին**, ալլաի տէսնում չի: «Հավանաբար առաջացել է գրաբարյան **յառաջ, առաջ(ք)** բառից, նշանակում է «երեսի դիմացը գտնվող, տարածվող կողմը, առջևի կողմը» »:

● **Կող(ք) || կօխկը || կօխկին**, օր.՝ Մարդուցը **կօխկին** կաղնում ա անջուկ օնում, թա հինչ էն ասում:

● **Կուշտ || կօշտը || կըշտին / կըշտեն || քըշտին / քըշտեն**, օր.՝ Էշը վեր էշի **կըշտեն** կապէս, յա խոյը կըսուվօրի, յա խըպայթը: «Հայերենի քերականություններում ընդհանրապես կապը բնորոշվում է որպես չթեքվող խոսքի մաս: Եվ կարծես թե հենց այդպես էլ պետք է լիներ: Չէ՞ որ կապերը բառերի ստորադասական հարաբերություններն արտահայտող սպասարկու բառեր են, հոլովական ձևերի համարժեքները և այդ իսկ պատճառով էլ իրենք հոլովվել ու փոփոխվել չեն կարող: Բայց հայ քերականները վաղուց են նկատել, որ կապ համարվող մի շարք բառեր թեքման, հոլովման ձևեր են ունենում»⁵: Բարբառումս ևս հանդիպում են հոլովված կապեր, ինչպես՝ **կօխկին, ըռաչին, նէստան, կօշտը** և այլն:

³ **Է. Աղայան**, *Մեղրու բարբառը*, Ե., Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիա, 1954, էջ 240:

⁴ **Ա. Մարգարյան**, *Հաղորդի բառ ու բան*, Ե., Արմավ հրատ. , 2023, էջ 267:

⁵ **Մ. Ասատրյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ձևաբանություն, 4-րդ հրատ., Ե., Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 360-361:

● **Համար** || **հըմար** / **մըհար**, օր.՝ Ուտիլի **մըհար** սերտը քինռւմ ա: Արդի հայերենի **համար** կապն է: Մի քանի երկվանկանի բառերում **ա**-ն շեշտակոորոյս լինելով դառնում է **ը**, օր.՝ մահակ / մըհակ, համար / հըմար: Տեղի է ունեցել փոխազդեցական հնչյունափոխություն՝ **համար** / **հըմար** / **մըհար**:

● **Հետ** || **նըհետ** || **հետ**, օր.՝ Մարթն ա կընէկը *ռըռըռ* **նըհետ** շատ սերավ էն: Ցույց է տալիս «**միասնություն, ընկերակցություն**»: Նը մասնիկը փոխարինում է գրաբարյան **զ** նախդիրին:

● **Հետի(համար)**, օր.՝ Ախպօրը **հետի** լաց ա ինռւմ:

● **Մէջ** || **մէջը** || **միջին**, օր.՝ Կիլժիւր կօխալ ա կըրասին **մէջը**: Արդի հայերենի **մէջ** կապն է ձևափոխված վիճակով:

● **Նէստա**, օր.՝ Հըրվանին **նէստան** հաց ա փօխ կալալ: Բացառականի վերլուծական ձևը ոչ լայն ծավալով արտահայտվում է նաև իր և անձ նշանակող գոյականների սեռականով և **նէստա(ն)** բառմասնիկով, որ անկախաբար վերցրած **նէստ(նիստ)** բառի բացառականն է:

● **Պէս** / **տէս**, օր.՝ Իշի հաքվի **տէս** վէշ մըծանում ա, վէշ կըրճանում: Այստեղ բառասկզբի **պ**-ն **տ** է դարձել:

● **Վիրա** / **յիրա** || **վըրա** / **յըրա** || **յիրալը**, օր.՝ Մարթին **յիրա**ն հա կըզնըվում ա: Գրաբարի **վերայ** բառն է, որը խոսվածքների մի մասում դառնում է **վիրա** / **վիրա**, իսկ ավելի գերակշիռ մասում՝ **յիրա** / **յիրա**, **յըրա** / **յըրա**: Առաջին երկուսում **ե**-ն **ի** է դարձել **ր**-ից առաջ գտնվելու, իսկ վերջիններում՝ շեշտակոորոյս լինելու պատճառով:

● **Տակ** || **տակը** || **տակին**, օր.՝ Նի յա մըտալ ըստօլին **տակը**: Գրաբարյան **տակ** բառից է, որը նշանակում է «**առարկայի ներքնի, ստորին մասը**»:

6 Ա. Մարգարյան, *Գորիսի բարբառ*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 230:

• **Տեղ** || 1. **տեղ (փոխարեն)**, օր.՝ Ուրա՛ն քոն իլաճի **տեղ** ա տինռւմ: 2. **տեղակ**, օր.՝ Կընգանը **տեղակ** մարըն ա խօսում: Համապատասխանում է արդի հայերենի **փոխարեն** բառին: Հաճախ շփոթություն է առաջանում **փոխարեն** և **փոխանակ** կապերի գործածության ժամանակ: «**Փոխարեն**-ը գուտ կապային կիրառություն ունի, մինչդեռ **փոխանակ** բառը և՛ կապ է, և՛ շաղկապ (չնայած, մինչև, նախքան բառերի նման): Սրանք տարբեր են նաև կապվող միավորի հանդեպ գրաված դիրքով. **փոխարեն**-ը հետադրություն է, **փոխանակ**-ը՝ նախադրություն, հետևաբար և չեն կարող փոխարինել իրար միևնույն խոսքաշարում»:

Տրական հոլովի հետ են գործածվում՝

• **Նման** || **նըման / մընան** || **մընանի**, օր.՝ Մէճի **մընան** ա պահում ուրա՛ն: Տեղի է ունեցել փոխազդեցական հնչյունափոխություն՝ **նման / նըման / մընան**: Առաջ է եկել գրաբարյան **նման** բառից, որ նշանակում է «**մի բանի նմանություն ունեցող**»:

• **Առանց / ըռանց** || **ըռընցի**, օր.՝ **Ըռընց** մը պա՛նի մըզանա խըռօվալ ա: Նաև հայցականով և որպես նախադրություն՝ **Բաըռընց** մարթ հունց ա ապրում: Գրաբարի նույն **առ անց** նախդրային կապակցությունն է, որ ցույց է տալիս «**բացասում, բացակայություն այն առարկայի կամ երևույթի, որի անունը դրվում է նրանից հետո՝ իբրև խնդիր**»:

• **Գօրա (համեմատ)** օր.՝ Ինձը **գօրա** պա՛ն չի կա: **Գօրա** կապը թուրքերեն *gore* բառից է առաջացել, նշանակում է «**որևէ բանի համապատասխան, համաձայն, համեմատ, ըստ**»:

⁷ Լ. Թեյյան, *Շարահյուսական նորմ. կապերի գործածությունը*, Ե., Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2019 № 2 (29), ԵՊՀ հրատ., 2019, էջ 85:

⁸ Մ. Ղազարյան, *Թուրքերեն-հայերեն բառարան*, Ե, Միտք հրատ., 2003, էջ 185:

• **Լաճեվ**(ի հեճուկս, ջրգրու), օր.՝ Մեզ լաճեվ ա ըտըհենց անում:
 «Լաճեվ-ն ունի աջըղու || ինսղու կապերի իմաստը: «Աջըղ-ը
 քարբառային բառ է: Սրանից կազմված են **աջուղ**, **աջուղու**, **ըջըղվել**,
ջիգրու և շատ բառեր: Գրաբարի մատենագրության մեջ դրանք չեն
 հիշատակվում և հայերենի քիչ քարբառներում են տարածված:
Աջըղ բառը նշվում է թուրքական փոխառությունների մեջ՝ **ըջըղու** և
աջըղ ձևերով, «ի հեճուկս, ջիգրու» իմաստներով: **Աջըղ** արմատին
 ձևով նման է նաև թուրքերենի **acik/miş** «սոված» իմաստով բառը:
 Աղբրեջաներենի **aciq** «1. չար, չարություն, 2. Հուսահատություն» և
aciqca «1. հակառակ, դիտավորյալ, 2. սկզբունքից ելնելով» իմաստ-
 ներով բառերի հիմքում, ինչպես նկատելի է, ընկած է **aci** արմատը:
 Աղբրեջաներենի **aciqca**՝ «հակառակ, դիտավորյալ», մակբայի հոմա-
 նիշներից **gecri**-ն է, որ առնչվում է հայերենում գործածական
ջ/ի/գրու բառին: Հնչյունաբանական քննությունից պարզվում է, որ
aciq ու **gecri** բառերի համար նույնական է հայերենի **ջիլ** արմատը:
Աջըղ բառում կամ **ու**-ն է դարձել **ը**, կամ **ի**-ն՝ **ու**՝ քարբառախմբում
 առկա հնչյունափոխության օրինակով»:

Հայցական հոլովի հետ են գործածվում՝

• **Դեպի** || **դիբա / դիբա / դըբա / բիդա / բըդա / դիբի / բեդի**, օր.՝
 Միշտ **բիդա** քեզ էս քաշում: Արդի հայերենի **դեպի** կապն է՝ տարբեր
 փոփոխությունների ենթարկված:

• **Մինչև / մինչել** || **չօրանը** || **չուրու / չըրու** || **չըքօրանը** ||
դէշանը, օր.՝ Կատվին մանգիլը **մինչել** մարաքըն ա: Առաջ է եկել

9 Մ. Քումուսեց, *Հնդեվրոպական "g" hisla /ջի/ արմատի ընդհանրացումները հայերենում և թուրքական լեզուներում*, Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյիին հիշատակին, Հիմնադրությունների ժողովածու, Ե., 2017, էջ 87:

գրաբարյան մինչև բառից, որ ցույց է տալիս «գործողության ժամանակի սահման»:

● **Բառատան(պես)** փոխառյալ բառ, օր.՝ Հըսնէլը **բառատան**, լըսէլը **բառատան**:

● **Առաջ / առաջ** կապը, օր.՝ Մըն օր **առաջ** յէս քէզ տէսալ էմ: Բառի ստույգ ծագումն անհայտ է, բայց հայտնի է, որ ժամանակի իմաստ է արտահայտում և որ գործածվում է միայն անորոշ դերբայի հետ: Ա. Մարգարյանը նշում է, որ «ամենայն հավանականությամբ **բառատան** կապը առաջ է եկել թուրք. **baştan «սկզբից»** բառից»¹⁰:

Բացառական հոլովի հետ են գործածվում՝

● **Յետ / յետ / յետը / յէդը / յէնդը (հետո)**, օր.՝ Ըտըրանա **յետը** մէզ նըհէտ խօսում չի:

● **Յէնդան || յէննան (հետո)**, օր.՝ Կընէկը մըռնէլան **յէննան** ալ օգում չի փըսակվի: Իբրև կապ է գործածվում նաև **ետն || յէնդ** բառի բացառականը՝ **յէնդա(ն) || յէննա(ն)**, որը և «**ետևից**» նշանակությամբ՝ սեռականով, իսկ «**հետո**» նշանակությամբ՝ հայցականով և բացառականով խնդիրներ է առնում:

● **Առաջ / առաջ**, օր.՝ Մէզանա **առաջ** ընդըրանք էն խուսացալ: Այստեղ **առաջ** կապը գործածվել է ժամանակի իմաստով և որպես ետադրություն:

● **Հեռի / հեռի**, օր.՝ **Հեռի** մըզանա, **հեռի** ծըզանա փիս պ **անէր** էմ լըսալ:

● **Տիյեր / տըլեր, տըվօր / տուվօր** տեղի մակբայներով որպես անիսկական կապեր, օր.՝ Ծօրան **տըվօր** կէտ ա քինռւմ: **Տիյեր** նշանակում է «**դեպ ի վեր**», **տըվոր** նշանակում է «**դեպ ի վայր**»:

¹⁰ Ա.Մարգարյան, *Գործիսի բարբառ*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 232:

● **Գլխաձև (բացի, զատ),** օր.՝ Ըխճըկական **գլխաձև** մին տըղա էլ օնի:

Գործիական հոլովով, այն էլ՝ ժամանակի իմաստ ունեցող բառերի հետ գործածվում է միայն **առաջ** կապը, օր.՝ Օրավ **առաջ** փօխկերքըտ յեր մի քաշիլ: Տարավ **առաջ** հիգիրվում իլւ:

Գործիսի բարբառի կապերն այսքանով չեն սահմանափակվում, մի շարք կապեր ենթակա են քննության, որը կիրականացվի հետագայում:

Գործիս	Միսխան	Կապան	Մեղրի	Արցախ
առ > առի (ս , տ, ն)	առ	առէ(ս, տ/թ,ն)	առէ+	առէ (ս)
առաջ > առաջ,ըռաջին	D nD չ+	ըռաջէն/ըռըշկէն		
կող(ք) > կօխկը/կօխկին	յան/յանին-	կօխկ/կօխկէն	յանուն -	կօխկը//կօխկէն
Կուշտ > կօշտը, կըշտին կըշտէն /քըշտին/քըշտէն	մԲտը-	կօշտը//քըշտի/էն/ /կըշտի/էն	քի՝ շտին+	կօշտը//քիշտէն//կըշտին

11 **Ա. Մարգարյան,** *Գործիսի բարբառ,* Ե., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 233:

համար > հըմար/մըհար/ հետի	խըմա	հէտէ	հԵլջի	մըհար
հետ > նըհէտ / հէտ	խէտը	նըհէտ	նըհէտ	նըհէտ
հէտի («համար»)	խըմա	հէտէ//խԾ թըր//խ Ծ թըրԵւ//խաթըռւ	հետա	հէտէ//խ Ծ թըրԵւ
մէջ > մէչը, միչին	մէչը	մաչին//մէչին	մանջին	մաչը//մաչ ին
նէստա	-	անա		-
պէս > տէս	նըման/լըման	հանցա//տօչնի		-
վիրա յիրա վըրա յըրա յիրԾ կը	վըրա/վիրԾ	յը/էրա	վէրա/վըա	յըրա/ն
տակ > տակը, տակին	տակը/տակին	տակ//տակէն	տակէն	տակը//տ ակէն
տեղ > տեղակ («փոխարեն»)	տէղը	տըղ//տըղակ//Ծ վ Ծ գ		-
նման > նըման / մընան / մընանի	նըման	նըման		-
առանց > ըռանց / ըռնցի	առանց	ըռանց	ըռնց	
գԲրա (համեմատ)	գյԲրԾ	(Եւ)գԲրԾ		-

լաճեվ //աջըդու (ի հեճուկս, ջգրու)	ինD դԲւ/լաճեվի	աջըդու//ինադո ւ/ /ինD դԲւ		-
դեպի > դիբD / դիբա / դըբD / բիդD / բըդD / դիբի / բեդի	թեխ	բեդամ//դիբD //բի դD /ի	դի` բի	բիդի
մինչև > մինչեվ / չօրանը, չուրու / չըրու /չըքօրանը /դեչD նը	դեչու	մընչուք	մինչի	չուրը
բD ստD ն (պես)	բD շտD ն	դD ստի/Տ ն//բD ս տD ն	-	
յետ > յետ / յետը / յեդը / յենդը («հետո »)	յետը	հետո//յետը//D ետըմըս	ետը/ետնե	յետը
յենդան/յեննան («հետո»)	յեդավ	ասատ էնը ընդըդան նհետ D D տըմըս		-
առաջ > առաչ	D ոD չ	առաչ//ըռաչեն// ը որշկեն	-	
հեռի > հեռի	հեռու	հըռե	-	հեռու
տիյեր / տըյեր, տըվօր / տուվօր	տիյեր/վըյեր	յեր// տըվեր//քաշ- ցածր	-	տիյեր/տը վեր
գիմD ն («Բացի», «զատ»)	զատ	կըման	սըվայ	կըման
առաչ	առաչ	առաչ	-	առաչ

Եզրակացություններ

1. Գործիսի բարբառի՝ մյուս բարբառներից տարբերությունների ամբողջական աղյուսակը:

Թիվ	Տարբերություն	Գործիս- Միսիան	Գործիս- Կապան	Գործիս- Մեղրի	Գործիս- Արցախ
1	Առ > արի	0	0.5	0.5	0.5
2	Առաջ > առաչ	0	1	1	1
3	Կող > կոխին	1	0.5	1	0.5
4	Կուշտ > կոշտ	1	0	0.5	0
5	Համար > հըմար	1	1	1	0
6	Հետ > նեհետ	1	0	0	0
7	Հետի («համար»)	1	1	0.5	1
8	Մեջ > մէջը	0	0.5	1	1
9	Նեստա	1	1	1	1
10	Պէս > տէս	1	1	1	0
11	Վիրա > վըրա	0.5	0.5	1	0
12	Տակ > տակը	0	0.5	0.5	0.5
13	Տեղ > տեղակ	0	0.5	1	1
14	Նման > նըման	0	0	1	0
15	Առանց > ըռանց	0	0	0	0
16	Գորա (համեմատ)	0.5	1	1	1
17	Լաճէվ > աջըղու	0.5	0.5	1	0.5
18	Դէպի > դիբա	1	1	0	0.5
19	Մինչև > չօրանը	1	1	0.5	0.5
20	Բաստան (պէս)	0.5	0.5	1	1
21	Յետ > յէտ («հետո»)	0	1	0.5	0


22	Յէնդան/յէննան («հետո»)	1	1	1	0
23	Առաջ > առաջ	0	1	1	1
24	Հեռի > հեռի	0.5	0.5	1	0.5
25	Տիյէր / Տըյէր	1	1	1	0.5
26	Գիման («բացի», «զատ»)	1	0.5	1	0.5
27	Առաջ	0	0	0	0

Ստորև ներկայացնում ենք Գորիսի բարբառի և Մեղրու, Արցախի, Կապանի և Սիսիանի բարբառների կապերի վիճակագրական աղյուսակը: Այս աղյուսակում յուրաքանչյուր բարբառի համեմատությամբ ներկայացված են տարբերությունները, ընդ որում՝ 0-ները ներկայացնում են տարբերությունների բացակայություն, իսկ 0.5, և 1 արժեքները՝ տատանումը տարբերությունների չափերով:

2. Գալով ընդհանուր եզրակացության՝ կարող ենք ասել, որ համեմատության արդյունքում Արցախի բարբառի տարբերությունը Գորիսի բարբառից ի տարբերություն մյուսների տոկոսային հարաբերակցության ավելի քիչ է՝ 46%:

Բարբառներ	Տոկոսային հարաբերակցություն
Սիսիան	53,7%
Կապան	62,9%
Մեղրի	74%
Արցախ	46%

3. Ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ Գորիսի բարբառում կան մի շարք կապեր, որոնք փոխառություններ են այլ լեզուներից, կապերի մի մասը բնիկ հայերեն ծագում ունի, մյուսներն էլ առաջ են եկել գրաբարյան ձևերից, այսինքն՝ գրական հայերենի ազդեցություններ են: Կապերի չնչին մասը պատմության ընթացքում կրել է փոփոխություններ, ինչպիսիք են առնմանությունը, հնչյունական կազմի փոփոխությունը, ընդհանուր արմատական փոփոխությունը և այլն: Գորիսի բարբառի և գրական հայերենի կապերի միջև նկատում ենք թե՛ արտասանական տարբերություններ, թե՛ բառերի այնպիսի տարբերակներ, որոնք չունեն համարժեք տարբերակը գրական հայերենում, ըստ այդմ էլ կարող ենք փաստել, որ Գորիսի բարբառը ունի առանձնահատուկ հնչյունական, բառային, ինչպես նաև քերականական կառուցվածք և իր յուրահատուկ նկարագիրն ունի հայերենի բարբառների շարքում:



Օգտագործված գրականության ցանկ

1. Բաղիկյան Խ. Գ., «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն», Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2010, 264 էջ:

2. Աղայան Է. Բ. , «Մեղրու բարբառը», Երևան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիա, 1954, 408 էջ:

3. Սարգսյան Ա. Յ. , «Հաղորդի բառ ու բան», Երևան, Արմավ հրատարակչություն, 2023, 786 էջ:

4. Թեյլան Լ. Գ., «Շարահյուսական նորմ. կապերի գործածությունը», Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019 № 2 (29), ԵՊՀ հրատ., 2019, 89 էջ:

5. Ասատրյան Մ. Ե., «Ժամանակակից հայոց լեզու», Ձևաբանություն 4-րդ հրատարակություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, 435 էջ:

6. Քումունց Մ. Ս., «Հնդեվրոպական "g" hisla /ջիլ/ արմատի ընդհանրացումները հայերենում և թյուրքական լեզուներում», Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյի հիշատակին, Հիմնադրությունների ժողովածու, Երևան, 2017, 136 էջ:

7. Մարգարյան Ա. Ս. , «Գորիսի բարբառը», Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975, 570 էջ:

8. Ղազարյան Ռ. Ս., «Թուրքերեն-հայերեն բառարան», Երևան, Միտք հրատարակչություն, 2003, 576 էջ:

9. Ջահուկյան Գ. Բ., «Ժամանակակից հայերենի առդիրների (կապերի) և շաղկապների իմաստային վերլուծությունը և դասակարգումը», 17 էջ:

Qumunc Mher, Bagdasaryan Manana-Phonetic, verbal and grammatical manifestations of Preposition in Goris dialect. - In this article, we studied the Prepositions of the Goris dialect. We carried out the work using the comparative and analytical method, comparing the dialect connections with the corresponding forms of literary Armenian. We have presented the prepositions according to inflection, bringing live dialectal

examples from the Goris dialect. Dialects are living and uncontrollable options in which prepositions play an important role. Unfortunately, the connections of the Goris dialect have not yet been sufficiently studied, and there is a need to verify this grammatical system. There are no studies presenting the origin, composition and historical change of Goris dialect connections. During the historical development of the dialect, these parts of speech have also changed. Most of them, due to little use, have left the functional layer of the dialect over time and aren't applicable to this day. However, many prepositions have undergone changes through assimilation, phonetic deviations and general radical changes. The article also presents different pronunciation forms of prepositions according to the dialect units of the Goris region. We have tried to find out the origin of a number of connections, found the sources of their origin, according to that we have distinguished borrowed connections, as well as connections with native and ancient Armenian origins.

Keywords: dialect, prepositions, comparative and analytical method, comparison, borrowing.

Кумунц Мгер, Багдасарян Манана - Фонетические, лексические и грамматические проявления предлогов в Горисском диалекте.-В этой статье мы рассмотрели предлоги и послелогии в Горисском диалекте. Мы провели работу сравнительным и аналитическим методом, сравнивая диалектные связи с соответствиями в литературном армянском языке. Мы представили связи по спряжению, приведя живые примеры диалекта из Горисского диалекта. Диалекты-это варианты с живым и неконтролируемым состоянием, и связи выполняют в них важную функцию. К сожалению, до сих пор связи Горисского диалекта изучены недостаточно, и существует

потребность в проверке этой грамматической системы. Нет исследований, представляющих происхождение, состав и историческое изменение диалектных связей Гориса. В ходе исторического развития диалекта части этой речи также были изменены. Многие из них со временем выпали из функционального слоя диалекта из-за небольшого использования и до сих пор неприменимы. Однако многие союзы претерпели изменения в результате присоединения, произошли фонетические отклонения и общие радикальные изменения. В статье также представлены различные формы произношения союзов в соответствии с диалектными единицами Горисского района. Мы попытались выяснить возникновение ряда связей, нашли истоки их происхождения, соответственно выделили заимствованные связи, такие как связи, имеющие исконно армянское и древнеармянское происхождение.

Ключевые слова: диалект, предлоги и послелоги, сравнительный и аналитический метод, сравнение, заимствования.